



#### 4. ՊԻՐԱՆԱՆ ՎԱՐԹ, ՄԱՆԻՇԱԿ ԹԱՓՎՈՂ ԱԽՃԻԳՅԸ

Մին շատ քյասիր մարթ, մին կրնեզյ ա ինոււմ: Ըտրանց շրենւմը թողըմ չըն կենան. տուս ըն քըցըմ, հունց վեր քյասիր: Տա քյընըմ ա օրիշ շեն:

Մին վեց ամիս ըտեղ կենըմ ա, հտաւ կրնեզյը եր կալած, ըտըղան տուս ա կյամ, ասըմ ա. — Ա՛ կրնեզյ, դե վըեր վըեչ մին տըեղ մըեզ թողըմ չըն կենանք, եք քյինինքյ ծըմակը, ընդըեղ կենանք: Հալ-բաթ կազեն, զըկեռ, սըեզնը, տըեղնը, ծըմակի տանձը, խընձոր, մըհասուր, մող, տես-տեն ուտելաւ մին թաճըմաւ կապրինք. յուա կքյինինք:

Կրնեզյըն ասըմ ա. — Հինչ կինի՛:

Ըտահանք քյընըմ ըն, քյընըմ մին զալին ծըմակ ըն քյըթնըմ, մընըմ ըտեղ: Էս ծըմակըմը տիրե, խաղալ, ճըղնիր, տես-տեն ըն հըվաքըմ, ըտեղ մին պուճուր մարաքյի մնան տոն շինըմ, ապրըմ:

Շատ ըն կենըմ, թա խըրեզյ, վըերչը էտ կրնեզյը մին խոխա յա պըերըմ, ինքն էլ ախճիզյ: Էտ կրնեզյը խոխին տիրեների մեչի պըտաւտըմ ա, պարուր շինըմ, տինըմ կոխկին: Իտի մին թաճըմաւ սպհըմ ըն:

Մին դոնըմ տըեսնըմ ըն իրեք կրնեզյ ըն կյամ էտ տունը: Աւման մինը էտ խոխին մին լաւ պըեն ա ասըմ:

Առաչին կրնեզյը էտ խոխին ասըմ ա. — Յըես ըստըա մին հենց կյեղեցկոթուն կըտամ, վըեր հու վըեր տըեսնա, հայիլ-մայիլ ինի, ուրանան տուս կյա, էնքան սիրի էտ ըխճըկանը:

էրկունշի կընեգլը ասըմ ա. — Յըես էս ըխճըկանը մին հենց օժ տամ, վըբը մին օրըմը մին տարու շանք մըծանա, լաց ինելիս աշկերան մարքարիգ եր տըեռնա ըրտուաունքի տըեղ, ժըծըղելիս պիրանան վարթ, մանիշակ թափվի, ման եկած տըեղն էլ վըհնը-տըեղերը վըհսկե քյարփուճնի տըեռնա:

Իրեքինշի կընեգլն էլ ասըմ ա. — Յըես ըտրան մին խաշ ըմ տամ, վըբը տա անմահ ինի, էտ խաշըն էլ ճիտըմը պահի:

Ըտրանք ասըմ ըն, պըրծընըմ, անհետ կորչըմ: էս մարթն նան էս կընեգլը մընում ըն ուրուր իրեսի եշելիս, մաթ մընացած:

էն օրանը հտը էտ խոխան լաց ինելիս աշկերան մարքարիղնի յա եր ածըմ:

Հարը նան մարը մընըմ ըն ըրմացած: էս մարքարիղնին հը-վաքըմ ըն մին պուլիգլ ածըմ, պահըմ:

Մին քանի օրանը հտը էտ կընեգլը ասըմ ա. — էս մարքարիղը տար օրիշ քաղաք ծախի, շոր, տըեստըեն առ, պըբը:

էտ մարթը պուլիգլը յոր ա օնըմ, քլինըմ մին քաղաք, էտ քաղաքըմը մին առըտուրական տըեսնըմ ա, էտ մարթին կըռնան փըռ-նըմ, տինը տանըմ, ասըմ. — Ախպեր, եք էս ղուը, հինշ ասիս քլըեգ կըտամ, ըտրանա մին խըրեգլ ինձ տո:

էտ մարթը մին հափուռ տամ ա ըտրան: էտ էլ շատ փող ա տամ ըտրան: էտ մարթը մին ըրբա յա առնըմ ամմեն հինշան առնըմ, ածըմ մաշը, մընացած փողերն էլ ածըմ մաշը, տանըմ կընգանը կողտը, վըբը էտ փողերավը տոն շինին: Իտի մին քանի հետ քլընըմ ա քաղաք, կյամ, խիլլմ փող թուփ անըմ: Մին հետ էլ ուրան նըհետ քաղաքան ուտա-փա՛հլմ յա պըբըմ, վըբը տոնը շինի: Տա շատ լմվ տըենը ա շինըմ: Պալատնի՛... էտ պալատներին քյարփուճնին լոխ վըեսկե յա ինոն: Ըտրա հետի էլ հըհուռ տըեղան ըլըվալավ ա անըմ, հշողին աշկերը ծկծկոտըմ: Ախճիգլըն էլ յավաշ-յավաշ մըծացալ ար, ինքն էլ էնքան նախշուռն ա ինըմ, վըբը էլ խոսկավ ասվիլ լի:

Մին օր թաքավերին տըղան ուրան նաճիր-վաճիրավը վըբըսի յա կյամ էտ ժըմակը: Հեռվան-հեռու տըեսնըմ ա, վըբը մին պըեն փըլըստրատին ա տամ:

Ուրան հընգլերունցը ասըմ ա. — Քլինինք տըեսնանք, էն հի՛նշ ա արևին տակին ինգի շըղշողըմ, պըծըպածի անըմ: Կողի հեռու տըեղ, ամմա լմվ պըեն ա ըրվըմ:

Ըտահանք քլընըմ ըն:

Շատ ըն քլընըմ, թա խըրեգլ, վըբընը հըսնըմ ըն էտ տոնը:



Քաջավերին տղան շատ ա խընթրում, վրեր թողին նի մըննի էտ տոնը տընսնաւ: Ըտա՛ւանք համեցեք ըն անըմ: Քաջավերին տղան նի յա մըննըմ էտ պալատը, էտ ըխճըկանը տընսնալն ըբաւտ սիրահարվըմ ա, վըռչ մին պընն չի կարրմ խոսի, օշը կուրցունում ա:

Վըրը շտ ասում ա. — Յընս եկալ ըմ ծըբեր ախճիգը օգիմ:

էտ ըխճըկանը հարը-մարը ասըմ ըն. — Մունք ախճիգ շօնինք քըրեզ տալի:

Տըղան ասըմ ա. — Զորք կհըվաքիմ, կյամ ծըբզ կըտորիմ:

Վըրը մին խոսկի լըն կյամ: Իրեք օրան ետը բիգի կյան ախճիգը տանին: Քաջավերին տղան հորը նան մորը ասըմ ա լոխ: Ընդրանք ոաղի չըն կըննըմ, ասըմ ըն. — Մըր անըմին լալը չի՛, վըրեր մունք քիսինք: Ժըմակին ախճիգը պըրինք մընզ հարս: Տղան ասըմ ա. — Զէ, էտ ախճիգըն ա, օղըմ ըք, օղեցիք, օղըմ չըք, մին ա ես օղեւու լըմ, կլոխ ըմ յոր օնեւու, կորչիմ:

Անց ա կըննըմ ժամանակ: Քաջավերին տղան լալ-լալ շորեր ա կալիլ տամ, լալ-լալ պըններ ա առնըմ էտ ըխճըկանը հետի: Վըրը հարը-մարը դաբուլ ըն կըննում, եր ըն կըննըմ պաղրաստոթուն քաշըմ, մարթիք ղարկըմ, վըր քիսին հըրսնացուն պըրին: էտ զարկած մարթկանցը մեչին ա ինըմ Քաջավերին պալատին դուլլուղին, ուրան սրեվտեզ ըխճըկանը նըհետ: էտ դուլլուղուն աշկը շուտանց ար Քաջավերին տղին յրան, օղըմ ար ուրան ախճիգը տա ընդրան: Տա աղի պիլիթ ա թըխըմ էտ ըխճըկանը ուտուցընըմ:

Վեր փայտոննին ուրուր հետա հըրսընքավերին եր կալած քըննըմ ըն, էտ դուլլուղին ուրանց փայտոնը մին խըրեգ իտըցընըմ ա: էտ պիւրանան վարթ-մանիշակ թափվող ախճիգը շատ ա ծըրավըմ:

Ասըմ ա. — Հի՛նչ կինի՛, մին խըրեգ ճուր տաք ինձ:

էտ դուլլուղին ճուր չի տամ:

Վըրը վըր էտ ախճիգը շատ ա ղաշանք անըմ, էտ դուլլուղին ասըմ ա. — Ծուրը աշկի լուսալ ա, թող աշկըտ հանիմ, տըրը ճուր տամ:

էտ ախճիգը ոաղի յա կըննըմ, էնքան ծարավ ա ինըմ: Դուլլուղին աշկին մինը հանըմ ա, տինըմ շուբու՛մը, էտ ըխճըկանը մին խըրեգ ճուր տամ:

Քըննըմ ըն, քըննըմ, էտ ախճիգը էլհա ծըրավում ա, ասըմ. — Հի՛նչ կինի, ինձ մին խըրեգ ճուր տաք:

Դուլլուղին ասըմ ա.

— Ճնճերը աշկի լնւաւով ա, թող աշկըտ հանիմ, տըեղը ճնճ տամ:

էտ ախճիգյը ուղի յա կըենում: Ղուլլուղլին էն մին աշկըն էլ ա հանում, քըցըմ շուբը, էլհա մին խըեգ ճնճ տամ:

Վըեր էրկու աշկաւ քուռուցնում ա, պըրծնում, էտ ղուլլուղլին գյըսւլմ յա քըցըմ էտ ըխճըկանը փըսակին շորերը հանում, ուրան րխճըկանը կից տամ, ըտրան էլ կուփի տամ, քըռի տամ, փայտոնան տըեն քըցըմ: Փայտոնը քըշըմ ըն, քլինում:

էտ ախճիգյը մընում ա ճընապարին ղրաղի մի խանդակըմ, աշկերը քոռ, լաց ինելիս: Վըեր տըսնում ա սաւ-սաւոնը չիկա, էտ ախճիգյը էտ մոշին քուլերը, էտ րիզի մնան տնւ տեռած փոշերը: Ժըեռքերավը տըես-տըեն ընելավ, փուրսող տաւավ, մին թահում ըտըղան տնւ ա կյամ, նի մըննում ծըմակը, ծըերքերավը տըփտըփելավ քյընում ա մին ծառի տակի նըստըմ, էնքան լաց ինում, վեր էտ ծառին տակը լցնւմում ա մարքարիգավ, վըեսկե քյարփնճավ:

Մին էլ լըսում ա ծըմական մին կացնի սաւ ա կյամ: Տա էլհա տափերը շուռգոտելավ փուրսող քյընում ա մին խըեգ մուտանում, ծեն տամ: Վեր շատ ծեն ա տամ, էտ ծենին յըա մին պառավ մարթ, վըեր ծըմակն ար եկալ փաղ անելի, լըմ ա: էտ սասին յըա կյամ ա տըեսնում մին քոռ ախճիգ, իրեսը ծըեռքերը շընգոտած էն ա ըտեղ եր ընգած:

էտ ախճիգյը էտ պառավ մարթին նաղ ա անում ուրան կլխավը ընցածը, ասում. — Ա՛ հոր տըեղ հաւ, ինձ եր կալ տար ծըեր տոն, ես քըեղ շատ օքութ կտամ, ինձ թողիլ մի էս յաբանա ծըմակըմը, ինձ կյուլի, կազանի պաժին մ'անիլ:

էտ մարթը ասում ա. — Ա՛ բալա, մին կըտոր հաց օնիմ ինք առ քըեղ տամ, ամմա կարիլ չըմ քըեղ տոն տանիմ, էնա տանը օխտը ախճիգ օնիմ, օխտեքան էլ կյըշըկյող, մինակ մըելըներին մինն ա պատառ լավ: Դե քու աշկերտ էլ քոռ ա, տանիմ քըեղ հի՛նչ անիմ, հուց ապրիմ:

էտ ախճիգյն ասում ա. — Ինձ վեշ մին պեն պետքը չի, թաքյլմ տոն տանիս, հալմ ես ըմ ծըեղ պահելու, հենա էն խանդակըմն էլ, էն ծառին տակին էլ էնքան վըեսկե, մարքարիգ կա՛, քլինի եր կալ ինձ էլ նըհետըտ տիր արարին յրան, տար:

էտ պառավ մարթը ուրխանում ա, քընում ա լոխ վըեսկին նան. մարքարիղը յոր օնում, էտ ըխճըկանն էլ ըրբին տինում, տանում տոն:

Կընեգյը նան ըխճըկերքը վեր տըեսնում ըն, կըզնւմում ըն հորը:



յրան, ասում. — էտ հո՞ր ըս էտ քողը եր կալալ, պերալ, մոնք իսկի կարոմ չընք ասարինք, ըտըան էլ կըլխավըն ըս պըեըալ:

Լոխնան կուճի ախճիգյը ասում ա. — Լնվ ըս ըրալ, ա՛ հար, վրեր պերալ ըս, ես կպահիմ:

Հարը ըխճըկորանցը յրան կըղնըվըմ ա, ասում. — էտ ախճիգյը մընղ լոխճիս էլ պահելու յա, մին տընսեքյ հիշքան վըեսկե, մարբարիդ ըմ պըեըա՛լ:

էտ վըեր տըէսնըմ ըն, ըսկըսըմ ըն էտ ըխճըկանը առաչին ծառայոթուն անիլը: Ծուը ըն տինըմ, էտ ըխճըկանը լըղըցընըմ, թիմըզցնըմ, յորղան-ղոճակի մընչի տինըմ: էտ վըեր վըեննը ըշտըղին տիրալ ար, լոխ վըեսկե քյարփոճնի ար տըեռալ, էտ ըխճըկերըը հըվաքըմ ըն:

Անց ա կըննըմ մին խիլլն վախտ, էտ ախճիգյը էտ պառաւ մարթին մին քանի փոնչ վարթ, մանիշակ ա տամ, ասում. — Ա՛ հար, էս մին փոնչ մանիշակը նան վարթը տար քըղաքըմը թաքավերին պալատին քըշտին ծախի: Վըեր առնող ինի, ասի ես փողավ չըմ ծախըմ, աշկի լոնսավ ըմ ծախըմ: Վըեր ասին, պա աշկի լոնսավ պըեն կինի՛, ասի թա պա էս ծուընը մինչև կյոտկատընղ եկած, ծուըն ծըմեռնը վարթ, մանիշակ կինի՛, համ էլ լնվ եշի, տըես աշկը աշ ջուըան ա հանըմ, թա ծախ, մընտըտ պահի:

էտ պառաւ մարթը յոր ա օնըմ մին պուճուը ղանըռլի մեչի տինըմ, տանըմ քաղաք, թաքավերին պալատին քըշտին կանչըմ. — Ա՛յ լա՛վ վա՛րթ, այ լա՛վ մանիշակ:

Դաստի էտ ղուլլուղչին տուս ա կյամ, ասում. — Ա՛յ վա՛րթ, մանիշակ ծախող, եք ըստեղ, քանի՛ յը՛ս տամ էտ վարթը նան մանիշակը:

էտ պոռաւ մարթն ասում ա. — Յըես փողավ չըմ ծախը՛մ, աշկի լոնսավ ըմ ծախը՛մ:

— Պա աշկի լոնսավ պեն կինի՛:

— Պա էս ցորտ ծըմեռնը վարթ, մանիշակ կինի՛:

Հարը կըտրած էտ ղուլլուղչին աշ ջուըան էտ ըխճըկանը աշկին մինը տուս ա օնըմ, տամ էտ պառաւին, վարթը, մանիշակը տանըմ, թաքուն տամ ուրան սըեկտեղ ըճըրկանը, ասում. — Ինք առ, տիրքըթիտ տակի քըթկալին մեչին, վըեր թաքավերին տըղան կյա՛, սըտըստտ ծըծաղի, էտ վարթ նան մանիշակը եր քըցի, վըեր գյիղա՛, թա տու էն ախճիգյըն ըս:

էտ պառաւ մարթը էտ մին աշկը պըերըմ ա աշ տըեղը քըցըմ: էտ աշկը սըղանըմ ա:

Մին քանի վախտան յետը, էլհա էտ ախճիգյը ծըծըղելիս պիրանան եր տրեռած վարթը, մանիշակը տամ ա էտ պառավ մարթին, ասըմ. — Ա՛հ հար, տար քաղաքը, էլհա պալատին քըշտին ծախի, վըբեր առնող ինի, ասի աշկի լուսավ ըմ ծախըմ:

Իտի էլ անըմ ա: Տանըմ ա քաղաք, պալատին քըշտին կանըմ. — Ա՛յ լավ վա՛րթ, մանիշակ:

էտ դուլլուղչին դեհա, դեհա, յրա պըրծած, թալդի, տուս ա կյամ, ասըմ. — Ա՛յ վարթ, մանիշակ ծախող, եք ըստեղ: էտ պառավ մարթը քյինըմ ա կոշտը:

էտ դուլլուղչին ասըմ ա. — Քանի՞ յր՞ս ծախըմ:

— Աշկի լուսավ ըմ ծախըմ:

— Պա աշկի լուսավ պըեն կինի՞:

— Պա էս ծուն-ծըմեռնը վարթ, մանիշակ կինի՞:

Շարը կըտրած էն մին՝ ծախ ջուբան աշկին լուսը հանըմ ա, տամ էտ պառավ մարթին, վարթը, մանիշակը տանըմ տամ ըխճըկանը, վըբեր տինի քըթկալին մեչին, վըբեր թաքավերին տըղան կոշտը կյա, ծիծաղի, եր քըցի, վըբեր գլիդա, թա էն ախճիգյըն ա:

էտ պառավ մարթը պըբըմ ա էն ծախ աշկըն էլ տըեղը քըցըմ, էտ ախճիգյը լըվանըմ ա:

Մին շափտանը ետը էտ ախճիգյը էտ պառավ մարթին շատ վըեսկե յա տամ, ասըմ. — Մեր քաղաքան մին խրեգ հըեռու ինձ հետի մին պալատ շինիլ տո, վըբեր թաքավերին պալատան լավ ինի:

էքսը պառավը ուստա-փահլա յա փըռնըմ, էտ ըխըկանը վըենին տական տուս եկած վըեսկե քյարփուճենբան մին վըեսկե ամաբաթ ա շինիլ տամ, վըբեր արեի մընան ալավ-ալավ ա անըմ: էտ ախճիգյը ըսկըսըմ ա էտ պալատին երի ատածըմը ապրիլը: Տոնը լըցնըմ ա աշխարքիս լավ-լավ սարքերավը, լոխճան դաշանգ պըեներավը: Լավ օտեղի պեներավը... էտ պառավ մարթին ըխճըկորանցը մարթի յա տամ, էն պուճուրըն էլ պերում ուրան կոշտը:

էտ պիրանան վարթ նան մանիշակ եր տըեռնող ախճիգյը ցիրեկը բախրա յա տըեռնըմ, ընգնըմ ծըմակնին, քըշերը ախճիգյ ա տըեռնըմ, կյամ պալատը:

Նշանտիրիքյին վախտը թաքավերին տըղան էտ ըխճըկանը մին մըտանի յա ինըմ տըված: էտ մըտանին էն ա ինըմ են դուլլուղչուն ըխճըկանը մաննըմը: էտ դուլլուղչուն ախճիգյը էտ պըրանան վարթ, մանիշակ եր տըեռնող ըխճըկանը անիցկ ա տամ, վըբեր էտ ախճիգյը ամմեն օր շտափի, քանի վըբեր ընգրա դանդան թաքավերին տըղան ուրան սիրըմ չի, ուրան կոշտը չի կյա՞մ, էն կըլխան էլ գյուճուճ



ար, վրեր տա ուրան նշանաժը չի: Ըտրա հետի էլ տա ուրան պալա-  
տին հայաթըմը մին շաղիր ար եր թողալ, ընդեղ ար ապրում: Յի-  
րեկրն էլ քընըմ ար վրեքսի:

Մին հետ ժըմակըմը թաքավերին տըղան մին բախըա յա տըես-  
նըմ, հիշքան բըմական ա ընդըմ, թա փըռնի, կաըմ չի: Թըվանգը  
տըրըքցնըմ ա, գյուլլան կյամ ա էտ բախրին վրեննան կընըմ:  
Իախրան փախըմ ա, կյամ էտ վրեսկե պալատը, ախճիգյ տըեռնըմ,  
քյինըմ երի ատաժին ուրան օթախը, թեքյ ընգնըմ: Թաքավերին  
տըղան հետան վաղ ա տամ, թա փըռնի, տըեսնըմ ա աշկան կորավ:  
Տա անին հետքավը քյինըմ ա, եր ինըմ էտ պալատին երի ատաժը,  
նի մընըմ էտ ըխճըկանը օթախը, տըեսնըմ մին ախճիգյ վրեսկե  
կարավաթին յրան պառկած, օշը տարած, կըռնան էլ արուն ա կյամ:  
էտ տըղան տըեսնըմ ա, վրեր էտ ախճիգը ուրան նշանաժին շատ  
նման ա: Տա ճուր ա շաղ տամ, էտ ըխճըկանը ետ պերըմ, ետավ  
էլ կըռնին յարան կասըմ: Ախճիգը վրեր օշը կըլոխն ա հըվաքըմ,  
լոխ էտ տըղին նաղլ ա անըմ ուրան կըլխավը ընցածը: Պատմելիս  
լաց ա ինըմ, արտասունքին մարքարիգ ա տըեռնըմ, վրեր ծիծա-  
ղըմ ա, պիրանան վարթ, մանիշակ ա եր տըեռնըմ: Թաքավերին տը-  
ղան ճնանըմ ա ուրան սիրածին, ուրան նշանաժին: Էլ տոն չի քընըմ,  
մըհեկ էլ էտ ըխճըկանը պալատին քըշտին մին շաղիր ա եր թողըմ,  
ըտեղ ապրըմ:

Հարը ըտրա հետան ման ա կյամ: Հընգյրունքը տըեղը քըթ-  
նուժ ըն, օղըմ ըն պալատը տանին: Ամմա էտ տըղան ասըմ ա.  
— Իմ հոր ըսեցիք, վրեր յըես տոն չըմ կյալու, միչև էա ըխճըկանը  
օղիմ վեչ, միչև ըստրա սրերտը կըկըղցնիմ վրեչ:

Անց ա կընըմ մին խիլլա վախտ, վրերը թաքավերին տըղան  
էտ ըխճըկանը սըերտը կըկըղցընըմ ա, մին հանգավ ըտրա նըհետ  
ապրըմ: Ըտրանա մին ախճիգյ ա ինըմ: Էտ ախճիգը տըեռնըմ ա  
չորս տըրեկան: Մին հետ հորը նըհետ էտ խոխան քընըմ ա թաքա-  
վերին պալատը: Ինքըն էլ մորը շատ նման ա ինըմ, ղաշանգյ-սիրուն:  
Թաքավերը նան թաքուհին վրեր տըեսնըմ ըն, ուրխանըմ ըն:

Թաքավերը տըղին ասըմ ա. — Եկեք ըստեղ ապրեցեք:

Էն պըրանան վարթ, մանիշակ թափվող ախճիգը խոխին ասած  
ա ինըմ, վրեր ուրան մուտանան թաքավերին հարսիցը օղի, պերի  
ուրան տա:

Էտ պալատըմը էտ խոխին շատ բաղարկեք ըն տամ: Ամմա նա  
էտ մուտանան ա օղըմ:

Թաքավերին հարսը տամ չի, ամմա ըստըղան-ընգըղան էնքան

ասում են՝ «Տոհա, տո» վրեր էտ սև տեղ հարսը մաննան հանում ա, տամ էտ խոխին:

Խոխան վրեր մտանին յոր ա օնում, ասում ա. — Էս իմ մոր մըտանին ա, քու ժրեոքիտ հի՛նչ ա անում, էլ քյրեզ չըմ տալու:

Թաքավերին կյիշ հարսը կըզնըվում ա մարթին յրան, վրեր խոխ պեններ ա փրռնալ: Ամմա դե էլ ըշտե՛ղ: Թաքավերին տըղան լոխ ուրան հոր նան մորը նաղլ ա անում:

Թաքավերը վրեր լոխ ըսկանում ա, ասում ա. — Դե քյինն հը-վաքի պըեր ըստըեղ:

Նա շատ ա ուրխանում, վրեր ուրան հարսը ճարվալ ա: Մըեծ պագրաստոթուն ա քաշում, քյինում են վրեր պերին:

Վրեր էն կյիշ հարսը օղում չի մտանին տա, մըտանին մաննան ծիքյ-ծիքյ ընկլիս էս կյեղեցիկ ըխճըկանը օշը տանում ա: Մըտանին խոխ գորութուն օնար, կյամ ըն տըեսնում օշը տարած, կարավաթին եր ընգած: Էլհա վրեր մըտանին քըցում են մաննը, ժրեոաց եր ա կըենում, էլ շտափում չի:

Ըստրանք ուրանց հարսը տոն ըն պերում, քառասուն օր, քառասուն քըշեր հըրսանիք ըն անում, ուրխանում, քյեփ անում: Էն սըեվ տեղ հարսըն էլ ուրան շարոթունան ճաքվում ա, մըեոնում:

Ըտրա մորն էլ ծիյին հմքյվան կապում ըն, քաշ-քաշ անում, մըեծ պատառը անգուճըն ա մընում:

Էտ ախճիգյը էն պառավ մարթին կուճուր ըխճըկանը պըերում ա պալատ, փըսակում Թաքավերին տըղին հընգյեր մին տրղի նհետ: Էն պառավ մարթին էլ միչև ուրան գյանքին վերչը պալատըմը պահում ա:

Էտ պիրանան վարթ, մանիշակ Թափվող ախճիգյը ուրան մարթին, ուրան խոխին նըհետ ըտեղ ապրում ա, օրախ, սիրավ, շատ-շատ տարինի:

Ընդրանք հասին ուրանց մուրազին, մունք էլ հասնինք մեր մուրազին:

Էն պեցուր արևին անա վըսկըշափաղ տըեոած երգինքան արևի օխտը շոխկ ա եր ընգնում. մինը ասողին, մինը լըսողին, մինը էս հմքյաթը լուս աշխարք հանողին, մինն էլ տիպողին: Էն իրեք արե-վին շոխկըն էլ լավ, սըերտը պեց մարթկանց, վեր դըլվըմը սար շու-նեցող մարթկանց քյոմազյ ա անում պարի խոսկավ: Արևին էդ շո-ղերը թող տանին ամեզյը ուրանց տըները լուսավըերին, օթախնին դաշանգյցընին, սարքին, վրեր ամմեն նի մըննեղիս սըրտընին փա-ռավերվի: